նակների, տեղեկագրերի հրատարակումը, ապահովում է ՀՀ գրադարանային, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուների համալրումը, ՀՀ մասնակցությունը գրքի, տպագիր արտադրանքի և այլ հրատարակությունների միջազգային ցուցահանդեսներին և այլն:

Կոնտակտներ.
Գործակալության պետ, հեռ.՝ 528600,
Հրատարակչական գործի բաժնի պետ, հեռ.՝ 528670,
Պոլիգրաֆիայի գործի բաժնի պետ, հեռ.՝ 528640,

ե) Մշակութային արժեքների պահպանության հարցերով զբաղվում է համանուն գործակալությունը, որը ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում է: Գործակալության հիմնական նպատակներն են՝ նպաստել ՀՀ մշակութային ժառանգության պահպանմանը, կանխել մշակութային արժեքների ապօրինի արտահանումը, ներմուծումը և սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը և այլն: Գործակալությունը ապահովում է ՀՀ տարածքից մշակութային արժեքների արտահանման և ներմուծման իրականացումը, ընդունում է որոշում ՀՀ տարածքից մշակութային արժեքների արտահանման և ժամանակավոր արտահանման հնարավորության կամ անհնարինության մասին, կազմում և համալրում է մշակութային արժեքների պահպանական ցուցակը, որում ընդգրկված մշակութային արժեքները կարող են արտահանվել միայն ժամանակավոր, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում սահմանված ժամկետում չվերադարձված արժեքների հետբերման ուղղությամբ, կազմում է ՀՀ մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկը, որով արտահանումն ու ժամանակավոր արտահանումը արգելվում է, առաջարկություն է ներկայացնում իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունը համարվող մշակութային արժեքների՝ պետության կողմից գնման իրավունքի իրականացման վերաբերյալ և այլն:

Կոնտակտներ.
Գործակալության պետ, հեռ.՝ 235086,
Գործակալության պետի տեղակալ, հեռ.՝ 234702,
Մշակութային արժեքների հայտարարագրման և վկայագրման բաժնի պետ, հեռ.՝ 230231,
Տեղեկատվության և առգրավված կամ բռնագրավված մշակութային արժեքների պահպանության բաժնի պետ, հեռ.՝ 230301:

զ) Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության հարցերով զբաղվում է համանուն գործակալությունը: Գործակալության հիմնական նպատակներն են՝ ապահովել ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի, ինչպես նաև հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հաշվառումը, ուսումնասիրումը, պահպանությունը, նորոգումը, վերականգնումը, օգտագործումը, պահպանվածությունը, հանրահռչակումը և այլն: Գործակալությունը իրականացնում է ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների՝

ա) պահպանական գոտիների նախագծերի հաստատումը, պահպանման պայմանակարգի կազմակերպումը,

բ) ամրակայման, վերականգնման, փոփոխման և բարեկարգման ծրագրերին հավանություն տալը, հետախուզման, պեղման աշխատանքներին թույլտվություն տալը, ինչպես նաև, վնասելու դեպքում, գյուղատնտեսական և այլ աշխատանքների արգելումը և դադարեցումը,

գ) պետական կադաստրի և պետական ցուցակի վարումը, տեղեկատվության մատչելիության ապահովումը,

դ) նախագծային աշխատանքների իրականացման ապահովումը, գիտատեղեկատվական և հանրամատչելի գրականության և տարեգրքի հրատարակման կազմակերպումը և այլն:

Կոնտակտներ.
Գործակալության պետ, **հեռ.՝ 523733**
Հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բաժին, **հեռ.՝ 527532,** Հուշարձանների վերականգնման բաժին, **հեռ.՝ 585851,**
Տարածքային ստորաբաժանումներ՝ Երևան, հեռ.՝ 523733, Արմավիր և Արարատ, հեռ.՝ /0234/ 23020, Արագածոտն և Շիրակ, հեռ.՝ /0312/ 22847, Կոտայք և Գեղարքունիք, հեռ.՝ 629761, Վայոց Ձոր և Սյունիք, հեռ.՝ /0285/ 64363, Լոռի և Տավուշ, հեռ.՝ /0256/ 23487:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերում է մշակույթի և երիտասարդության հարցերի բնագավառում պետության կողմից մատուցվող հանրային ծառայություններին: Այն տեղեկատվություն է պարունակում ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործառույթների, ինչպես նաև հեռախոսահամարների վերաբերյալ:

Մայիս, 2005

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Այդ բնագավառներն են.

ա) մշակութային քաղաքականություն,

բ) երիտասարդական քաղաքականություն,

գ) միջազգային համագործակցություն և սփյուռք,

դ) հրատարակչություն,

ե) մշակութային արժեքների պահպանություն,

զ) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանություն:

ա) Մշակութային քաղաքականության բնագավառ

Մշակութային քաղաքականության սկզբունքները և նպատակները արվեստի և մշակույթի բնագավառներում իրականացնում է ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի Մշակութային քաղաքականության վարչությունը, որի գործունեության հիմնական խնդիրներն են՝

ա) մշակույթի, արվեստի, ժողովրդական ստեղծագործության, մշակութային համագործակցության, կրթության և գիտության բնագավառներում իրավական ակտերի նախագծերի, հայեցակարգերի ու պետական նպատակային ծրագրերի մշակումը,

բ) պետական թանգարանային, գրադարանային հավաքածուների հաշվառման, պահպանության, վերականգնման, համալրման, ուսումնասիրման, ներկայացման և հանրահռչակման ապահովումը,

գ) պետական թանգարանային, գրադարանային և արխիվային հավաքածուների, երաժշտական, թատերական խմբերի խաղացանկի և երկացանկի համալրման նպատակով կերպարվեստի, երաժշտական և թատերական արվեստի ստեղծագործությունների գնման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

դ) պետական թանգարաններում, գրադարաններում, թատերահամերգային կազմակերպություններում և կինոստուդիաներում անվտանգության ու տեղեկատվության ապահովման արդիական համակարգեր ստեղծելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

ե) թանգարանային, գրադարանային հավաքածուների պահպանվածությունն ապահովելու նպատակով հավաքածուներից օգտվելու կանոնակարգերի մշակումը,

զ) ազգային մշակույթն ու արվեստը միջազգային հանրությանը ներկայացնող ծրագրերի մշակումը և դրանց իրականացմանն աջակցելը,

է) ՀՀ տարածքում հյուրախաղային և ցուցահանդեսային գործունեության ընդլայնման, ստեղծագործական խմբերի, մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունների միջև համագործակցության, կապերի և շփումների ստեղծման ու զարգացման ապահովումը,

ը) ժողովրդական ստեղծագործության պահպանման, տարածման ու զարգացման, մշակութաժամանցային գործունեության բազմազանության ապահովման ծրագրերի մշակումը,

թ) մշակույթի և արվեստի բնագավառներում միջազգային միջգերատեսչական պայմանագրերի մշակման, օտարերկրյա պետություններում (նաև՝ Սփյուռքում) ազգային արվեստի տարածման ու մշակութային համագործակցության նպատակով ստեղծագործական խմբերի, անհատ կատարողների ու ստեղծագործողների հյուրախաղերի իրականացման, ինչպես նաև՝ համապատասխան մասնագետների գործուղման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

ժ) պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ մշակույթի և արվեստի բնագավառներում մեթոդական և խորհրդատվական ծառայությունների իրականացման ապահովումը,

ժա) մշակույթի և արվեստի բնագավառներում իրենց վաստակով նշանավոր անձանց և արվեստագետներին նախարարության պատվոգրով, շնորհակալագրով, մեդալով, պետական պարգևներով պարգևատրելու, ՀՀ պատվավոր կոչումներ, ինչպես նաև գեղարվեստական պետական խմբերին և թատրոններին «ակադեմիական» կոչումներ շնորհելու համար առաջարկություն ներկայացնելը,

ժբ) պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ պետական մշակութային քաղաքականության իրականացման ապահովումը,

ժգ) պետական մշակութային քաղաքականության իրականացման նպատակով՝ մշակութային գործունեության զարգացման տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և այլն:

> **Կոնտակտներ.**
> վարչության պետ, հեռ.՝529310,
> թանգարանային, գրադարանային և արխիվային գործերի բաժին, հեռ.՝ 529310,
> արվեստի և ժողովրդական ստեղծագործության բաժին, հեռ.՝ 521972,
> պետական ծրագրերի, մշակութային համագործակցության, կրթության և գիտության բաժին, հեռ.՝ 521972

բ) Երիտասարդական քաղաքականության բնագավառում ՀՀ Մշակույթի և երիտասարդության նախարարությունը ապահովում է պետական երիտասարդական քաղաքականության մշակումը և իրականացումը, աջակցում է երիտասարդական ձեռնարկատիրության զարգացմանը, տեղեկատվական և փաստաթղթային, խորհրդատվական և սոցիալական, մասնագիտական կողմնորոշման ու զբաղվածության երիտասարդական ծառայությունների ու կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը, երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, նրանց իրավունքների և օրինական շահերի իրականացմանը, վերլուծում, ուսումնասիրում և կանխատեսում է սոցիալական գործընթացները երիտասարդության միջավայրում, դրանց ազդեցությունը պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա և այլն:

գ) Միջազգային համագործակցության և սփյուռքի բնագավառով զբաղվում է համանուն վարչությունը, որը մշակում և կնքում է միջազգային միջգերատեսչական պայմանագրեր, մասնակցում է ՀՀ միջազգային պայմանագրերի մշակմանը, ապահովում է ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը մշակույթի և երիտասարդության բնագավառներում, համագործակցում է միջազգային և սփյուռքի մշակութային և երիտասարդական կազմակերպությունների հետ, այդ նպատակով օտարերկրյա պետություններ է գործուղում ստեղծագործական և երիտասարդական խմբեր, անհատ կատարողներ, մասնագետներ, ՀՀ-ում ընդունում է ստեղծագործական և երիտասարդական խմբեր, անհատ կատարողների, մասնագետների արտերկրից, աջակցում է փոխանակումների զարգացմանը:

> **Կոնտակտներ.**
> Վարչության պետ, հեռ.՝ 566065:

դ) Հրատարակչության բնագավառ.

Հրատարակչության բնագավառով զբաղվում է Հրատարակչական գործի գործակալությունը, որը ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում է: Գործակալության հիմնական նպատակներն են՝ նպաստել գրքի, տպագիր արտադրանքի և այլ հրատարակությունների ստեղծմանը, պահպանվածությանը, տարածմանը, ուսումնասիրմանը, հրատարակչական գործի կազմակերպմանը, զարգացմանը, կատարելագործմանը, տեխնիկական միջոցների զարգացմանը, շահագործմանը, ստանդարտացմանը, գրավաճառ ցանցի ստեղծմանն ու զարգացմանը և այլն: Գործակալությունը պետական աջակցություն է ցուցաբերում հրատարակչական գործի զարգացմանը, ապահովում է գրքի, տպագիր արտադրանքի և այլ հրատարակությունների, ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների և տոնավաճառների (այդ թվում՝ միջազգային) անցկացումը, կազմակերպում է գրադարանային, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուների կազմում ընդգրկված մշակութային արժեքների, դրանց կազմին և բովանդակությանը վերաբերող մասնագիտական, գիտատեղեկատվական, վերլուծական նյութերի, ցուցա-